

ԿՈՍԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԳՈՀԱՐԻԿ ՊԱԶԱՐՈՍՅԱՆ

ԿՈՍԻՏԱՍԻ ԱՆՀԱՅՏ ԵՐԳԵՐԸ


րաշբով մը 1943-ին ձեռև ին-
կան վարդապետին երկու տես-
րակները, որոնք կպարումա-
կեին յոթանասուն անտիպ ժո-
ղովրդարին երգեր, գրի առնված 1913-ին
արևելյան ձայնագրությամբ:

Այդ երգերը ընել տվին ինձ աշխատանք
մը, զոր Փարիզի երաժշտանոցի ուսուցիչ-
ներս, իրենց բոլոր հմտությամբ, անկարող
պիտի ըլլային ընել տալու Ստիպեցին, որ
սովորիմ արևելյան ձայնափշներն ու եղա-
նակները իրենց դարձվածքներով, ուսում-
նասիրեմ կերպը դաշնագորումին, որ Վար-
դապետինն է, ու ի վերջո թափ տամ այն
կյանքին, որ կեռա ներսս, երբ կլսեմ երգը
ցեղիս:

1942-են ի վեր թափած աշխատությունս
ցուց տվավ ինձին ուղին, որուն ամեն հայ
երգահան պարտավոր է հետեւել, եթե կուզե,
որ իր կտորները կրեն տոհմային դրոշմ,
գույն և ոճ, որոնք միմիայն մերն են:

Ցոթանասուն երգերը մեկ ամսվան ըն-
թացքին վերածված էին եվրոպական երա-
ժշտության ու արդեն հարուստ ներշնչա-
րան մը կպարզեին ինձի:

Հուգում, հիացում, խանդավառություն ի-
րար կհաջորդեին մեջս, ու կդաշնավորեին
առաջին երգը, որ ողբ մըն է 5/4 շափով,
ԲԶ եղանակ, օթրնանի նահանգի Սուրմալու
գալարի եվշիլար գյուղումը երգված: Երա-
ժշտագետ ու անմոռանալի մեր Վարդա-
պետը այնպիսի կանոնավորությունով մը
նոթ առած էր, — արևելյան ձայնանիշները,
ժողովրդական երգը իր զանազան տունե-
րով, երգող գյուղացիին ո՞ր գալառին, ո՞ր
դյուղին ըլլալը, — որ բնականորեն պարտք
կդնի վրաս այդ երգով ամիսներ տարվե-

լու, արտաքին անցուդարձերում խորը
փնտուելու, ներշնչվելու:

Ողբը դաշնավորված է, կխորհիմ, այն-
պես, ինչպես Վարդապետը պիտի ուզեր որ
ըլլար, պարզ մտացիորեն զգայում ու գյու-
ղը վերհիշել տվող բնույթով: Ինձ այսպես
կթվեր, թե վերջապես երաժշտական աշ-
խարհի մեջ հայերն սկսեր եմ խոսիլ. արդ-
յո՞ք հայերենն զգալ գիտեի, թե ի՞նչ էր: Ա-
տոր գիտակցելու համար պետք էր պահ մը
հեռու նետել եվրոպական երաժշտության
պաշարս, զոր 13 տարվան միշոցին հավա-
քեր էի ու զառնալ գիտունորեն տգետ ու
իմաստունորեն պարզ:

Երգին բառերը խոր, սիրտ բգկտող, կու-
զեն որ չաս, որովհետև լացը քիչ է անոնց
համար.

«Աղջիկ մերդ մեռել ա,
Նեյնիմ աման օ՝ օ՝ շորերը
կելալուել ա,
Վա՝ յ մերդ մեռեի սարի աղջիկ,
զիյան աղջիկ,
կվաճամ վարդի ջրով, չորացնեմ
բերնի գոլովի:

Երկրորդ աշխատանքը կշիներ մահերդ մը
այդ ողբի վրա, հոս եվրոպական մշակույթս
շարժամարհեցի, ալ վասնգե զերծ էի, չէ որ
հայրենի հողս առած էի իբր մեկնակետ ու
շունչս կմնար հարազատորեն հայ, ընդլայ-
նելով առանց վրդովումի երգը Վարդապե-
տին, զոր ունկնդիրը իբր կընե այնքան դյու-
րությամբ:

Երախտիքի անհուն զգացումով կոգեկո-
չեմ հիշատակը անմահ Վարդապետին ու
կմոռնամ, թե ինձ պակսեր է բախտը զինքը
տեսած ու լսած ըլլալու:

Կ. Պոլիս

(«Ալիք» թիվ 75 1946 թ. Թեհրան)